ԱԶԳ

# Երկխոսանք

***Կան պատմական պահեր, երբ դրանց իմաստավորման ու համակացման խնդիրը ձեռք է բերում անհամեմատ ավելի սուր, կենսորոշ նշանակություն: Նման պահեր են մարդկության, կամ որեւէ ժողովրդի համար ճակատագրական շրջադարձային փուլերը, այսպես կոչված սահմանային իրադրությունները, երբ դրանց իմաստավորման մեջ թեկուզ չնչին սխալները կարող են հանգեցնել անդառնալի կորուստների, ընդհուպ այս կամ այն ժողովրդի պատմական ասպարեզից դուրս մղումը, հոգեկան, բարոյական եւ նույնիսկ ֆիզիկական բնաջնջումը:***

[illegible]

[illegible]

ՏԵՍԱԿԵՏ

## Ո՞րն է ավելի նպատակավոր

Իրենց գրություններում, որոշ հրեա գիտնականներ շարունակ կրկնում են ողջակիզման «եզակիության» հանգամանքը, այն, որ իրենց ցեղասպանությունը եզակի երեւույթ էր:

Երբ «եզակիություն» բառի տակ նրանք հասկանում են այն, որ ոչ մի ուրիշ մարդկային տառապանք չի կարելի համեմատել ողջակիզման հետ, ապա ոչ մի առարկություն չունեմ այդ բառի օգտագործման դեմ: Արդարեւ, ոչ մի ուրիշ ժողովուրդ այդքան մեծ թվով ու խնամքով ծրագրված ցեղասպանությամբ չկոտորվեց գերմանացիների կողմից, ինչպես հրեաները:

Այնուամենայնիվ, ես գտնում եմ, որ այդ գիտնականները «եզակիություն» բառի տակ այլ նպատակ են հետապնդում: Նրանք ցանկանում են աշխարհին հավատացնել, որ հրեաներից բացի ոչ մի ուրիշ ժողովուրդ այդքան չի տանջվել մարդկության պատմության մեջ, եւ որ նրանք ամենամեծ զոհերն են:

Նման տրամաբանությամբ նրանք սայթաքում են ներքեւ եւ նսեմացնում այլոց ցեղասպանությունների հետ նաեւ իրենցը: Նման դիրքորոշումը մի ժողովրդի կողմից, որն առավել քան ուրիշները պետք է կարեկից լինեն ուրիշների տառապանքներին, միանգամայն դատապարտելի է եւ անընդունելի: Իրականում դա հակասում է նաեւ հրեա ժողովրդի շահերին:

Առանձնացնելով հրեա ժողովրդի տառապանքները, այդ գիտնականները փաստորեն մեկուսացնում են իրենց ժողովրդին մարդկության մնացած հավաքականությունից: Նրանք արդեն այնքան են եզակիացրել ողջակիզումը, որ թվում է, թե ոչ մի ուրիշ ազգ իրավունք չունի դրա հետ առնչություն ունենալ կամ նույնիսկ կարեկցանք հայտնել զոհերի համար:

Իմ կարծիքով, իրենց իսկ շահերից ելնելով, հրեաները պետք է այդ մեծագույն ողբերգությունը դարձնեն համամարդկային փորձառության մի մասը: Նրանք պետք է այնպես ներկայացնեն, որ մարդիկ հասկանան, թե այդ դժբախտությունը կարող է ցանկացած ազգի «դուռը բախել»: Հաճախակի կրկնված «Այլեւս երբեք» կարգախոսը իմաստազրկվում է, երբ ողջակիզումը դիտվի որպես եզակի երեւույթ, որն այլեւս չի կարող տեղի ունենալ: Ընդհակառակը, մենք պատրաստ ենք ընդունել, որ նման յարիից նյութվել է նոր բռնակալների կողմից, եւ որ ամեն ջանք պետք է թափվի դրա իրագործումը արգելելու համար: Դժբախտաբար, ցեղասպանություններ տեղի են ունեցել ողջակիզումից ե՛ւ առաջ, ե՛ւ հետո:

Անվայել է միլիոնավոր մարդկանց (հայ լինեն նրանք, հրեա, թե կամբոջացի) սպանությունների ու տառապանքները համեմատել մեկը մյուսի հետ՝ պարզելու թե ո՞վ է ավելի շատ տուժել: Նման անհեթեթություններով մեր ջանքերը վատնելու փոխարեն մենք պետք է մեր ձայները միասին բարձրացնենք դատապարտելու ոճրագործներին, հիշատակելու մեր զոհերին եւ ստեղծելու այնպիսի լծակներ, որոնք անհնարին կդարձնեն այդ դժբախտությունների կրկնությունը: Հրեաների կողմից անվայել է նաեւ նսեմացնել հայկական ցեղասպանությունը պարզապես շեշտելու համար իրենց ողջակիզման եզակիությունը: Պատմության բուրժ նենգափոխիչները կառչում են նման հայտարարություններից: Հրեա գիտնականները, երբեմն առանց դիտավորության, ջուր են լցնում հայերի ցեղասպանությունը ժխտող թուրքերի ջրաղացին: Բարեբախտաբար, մեր կողքին գործում են դոկտ. Իսրայել Չառնիի նման հրեա գիտնականներ, որոնք վճռականորեն դեմ են «եզակիության» այդ գաղափարին եւ ընդունում են, որ տառապանքը համամարդկային երեւույթ է: Սա ավելի մարդասիրական մոտեցում է եւ, մեր կարծիքով, ավելի նպատակահարմար իրենց՝ հրեաների շահերին:

[illegible]

